

## Ի ՊԱՏԻՎ ՀԱՅ ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԵՐՏՈՂԻՆ՝ ԱՇԽԱՐՀԲԵԿ ՔԱԼԱՆԹԱՐԻՆ

Երեւանի Տերյան փողոցի թիվ 62 տունը քաղաքի համար հիշողության նոր վայր դարձավ՝ պատին փակցված հուշատախտակի շնորհիվ. վկայություն, որ հայագետ, հնագետ, պատմաբան Աշխարհբեկ Քալանթարը 1935-38 թթ. ապրել է այս տանը: Սա հարգանքի տուրք է մեծավաստակ գիտնականին, որի ներդրումը հայագիտության, հնագիտության, հայ մշակույթի ասպարեզում, հիրավի, արժեքավոր եւ եզակիորեն կարելու է գիտության համար:



Աշխարհբեկ Քալանթարը ծնվել է 1884 թ. Լոռու Արդվին գյուղում: Պետերբուրգում աշակերտել է

Նիկողայոս Մառին, ուսանելու տարիներից ներգրավվել Աճիի պեղումներին: 1914-ին Մառն իր բացակայության ժամանակ նրան է վստահել Աճիի պեղումների ղեկավարությունը եւ այդ աշխատանքների շնորհիվ են այսօր Հայաստանում պահպանվում Աճիի հնագիտական նյութերը, որոնք գիտնականը փրկեց 1918 թ.: Մինչ այդ՝ 1917-ին՝ Ն. Ադոնցիի հետ մասնակցել էր Վանի հնագիտական երկրորդ արշավանքներին:

Աշխարհբեկ Քալանթարը Երեւանի պետական համալսարանի 7 հիմնադիր դասախոսներից էր, ուր նաեւ ստեղծեց հնագիտության ամբիոնը: 1922-ին հրատարակեց հնագիտության առաջին հայերեն դասագիրքը, ինչպես եւ հիմնադիրներից մեկը եղավ Հայաստանում հնությունների պահպանության կոմիտեի: Նա ղեկավարել է բազմաթիվ արշավախմբեր ու պեղումներ, իբրեւ հմուտ մանկավարժ պատրաստել ու կրթել է մասնագետների մի քանի սերունդներ:

Աշխարհբեկ Քալանթարի բացառիկ բեղմնավոր գիտական եւ մանկավարժական գործունեությունն ընդհատվեց ստալինյան ռեպրեսիայի տարիներին՝ 1938 թվականին, մահացավ 1942-ին:

Պրակտիկ գործունեությանը զուգահեռ նրա կատարած գիտական հետազոտություններն ու ուսումնասիրությունները՝ «Հայաստան. Քարե դարից

միջնադար», «Վանստանի արձանագրությունները» եւ «Նյութեր հայկական եւ Ուրարտական պատմությունից» հատորները անգլերենով վերջերս հրատարակվեցին Փարիզում «Մերձավոր Արեւելքի քաղաքակրթությունները» հեղինակավոր մատենաշարով՝ արժանանալով եվրոպական մասնագետների բարձր գնահատանքին: Հռոմի համալսարանի պրոֆ., ճշմարտագետ Սալվինին գրում է, որ Քալանթարի գրքի հրատարակումով գիտության համար լիակատար ոչնչացումից փաստորեն փրկվում են Վանի ուրարտական արձանագրությունների մի հատվածը: Չիկագոյի համալսարանի պրոֆ., հնագետ Ադամ Սմիթը գրում է. «Քալանթարի կյանքը եւ գործը բացահայտում են այն մնայուն կարեւորությունը, որ ունի Հայկական լեռնաշխարհը համաշխարհային պատմության մեջ»:

Իսկ «Ամերիկյան հնագիտական հանդեսը» Ա. Քալանթարի փարիզյան այս հրատարակության առաջին հատորի գրախոսականում գրում է. «Եթե մինչ այժմ Լեւոն-Հաուպտն ու Սառն էին համարվում Հարավային Ամերիկական վաղ պատմության հետազոտությունների նախաձեռնողները, ապա այս հատորը համոզիչ կերպով ցույց է տալիս, որ ոչ այլ ոք, քան Աշխարհբեկ Քալանթարն է եղել Հայկական բարձրավանդակի հնագիտության մանրակրկիտ կերտողը»:

Երբ մտքի մշակն ու նվիրյալն իր տաղանդն ու իմացությունն է բերում հայրենի գիտությանն ու մշակույթին, հետագա սերունդներն էլ պարտավոր են պահել-պահպանել այդ արժեքները եւ ճանաչելի դարձնել դրանք՝ իբրեւ գնահատումն այդ վաստակի ու նվիրումի: Այս գիտակցության դրսևորումներից է գիտնականի ապրած տան պատին հուշատախտակի տեղադրումը, որի բացման արարողությունը տեղի ունեցավ նոյեմբերի 26-ին՝ հայ գիտության ու մշակույթի անվանի գործիչներ, ակադեմիկոսներ Գրիգոր Գուրզադյանի, Վարազդատ Հարությունյանի, Վլադիմիր Բարխուդարյանի, նկարիչ Հակոբ Հակոբյանի, ճարտարապետ Սարգիս Գուրզադյանի, արվեստաբան Լեւոն Չուքասզյանի եւ այլոց ներկայությամբ: Հուշատախտակի հանդիսավոր բացումը կատարեցին հնագետի դուստրը՝ Սարիաննա Գուրզադյանը եւ Վարազդատ Հարությունյանը, որն անձամբ ճանաչել է Քալանթարին:

«Աշխարհբեկ Քալանթարը մեր հայագիտության նվիրական ու ողբերգական անուններից է: Ինչպես իր բացառիկ ուսուցիչները՝ Հովսեփ Օրբելին, Ն. Ադոնցը, ինքն էլ չէր կարող բավարարվել միայն պատմության, լեզվի կամ հնագիտության ասպարեզներով: Նրա աշխատանքները հավասարապես կարեւոր են ինչպես հայ ճարտարապետության, պատմության, նաեւ արվեստի ուսումնասիրությունների համար», արժեւորումի իր խոսքում Լեւոն Չուքասզյանն անդրադարձավ գիտնականի քաղաքացիական կեցվածքին նաեւ, երբ Ա. Քալանթարը 30-ականներին շարունակաբար դիմում էր պատկան մարմիններին՝ Սբ. Պողոս-Պետրոս եւ Կաթողիկե եկեղեցիների քանդումը կանխելու բազմաթիվ գրություններով: Դժբախտաբար, նրա ջանքերն այս ուղղությամբ ապարդյուն անցան (առաջինը՝ քանդվեց, Կաթողիկե եկեղեցու մի մասը մնաց), սակայն մեզ

ավանդված նրա ուսումնասիրություններն այս մասին, փաստելով պատմական իրողությունները, նաեւ պատվիրան են հետագա սերունդներին՝ կանխելու պատմամշակութային արժեքների ոչնչացման բարբարոս գործելակերպը, ինչը շատ արդիական է այժմ՝ մեր քաղաքի համար:

«Մեր ժողովրդի համար շատ կարեւոր է մի նոր դասակարգ, որ եղել է եւ այսօր չկա՝ մտավորական, արիստոկրատ դասակարգի վերականգնման մասին է խոսքը, առանց նրանց մեր ժողովուրդը դժվար թե շատ կարողանա առաջանալ», այսպիսին էր օրվա խորհրդի՝ Հակոբ Հակոբյանի մեկնաբանությունը:

Հուշատախտակի բացման արարողությանը մասնակցում էին հնագետի թոռները՝ նշանավոր գիտնական, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր Վահագն Գուրզադյանը, Աշխարհբեկ Քալանթար-կրտսերը: Վահագն Գուրզադյանը գիտական գործունեությանը զուգահեռ երկար տարիներ նախանձախնդրորեն զբաղվել է հայագետի արխիվների պրպտումներով, նրա ուսումնասիրություններն ամբողջացնելու եւ հրատարակության պատրաստելու աշխատանքներով: Նա ներկայացրեց Ա. Քալանթարի գիտական գործունեության տարբեր ոլորտների մասին արժեքավոր տեղեկություններ:

Հուշատախտակը, որ հեղինակել է վաստակավոր ճարտարապետ Սարգիս Գուրզադյանը, կրում է մի քանի խորհրդանիշներ: Շրջանակը կրկնում է Աճիի զինանշանի ուրվագիծը. (Քալանթարը ուներ ուսումնասիրություն այդ զինանշանին նվիրված): Ձետեղված է Քալանթարի Վանում հայտնաբերած Ուրարտուի Սենուա թագավորի արձանագրության մի հատված, ինչպես նաեւ մի զարդանախշ Վանստանի վանքից, որի արձանագրությունները ուսումնասիրել էր գիտնականը:

*ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱԼ*

## ՂԱՐԵՐ ԱՌԱՋ ԵՎ ԱՅՍՕՐ

*ԿԱՐՊԻՍ ՍՈՒՐԵՆՅԱԼ*

*(էջեր օրագրից)*

18 սեպտեմբեր (1972)- Մերիմեի պատմաբանական մի գիրքը եւս կարդացի: Հին Հռոմ, ի մասնավորի՝ քաղաքացիական պատերազմների շրջանը, սոցիալական տարբեր դասերի արյունարբու բախումները իշխանության համար: Սուլլա, Մարիուս, Կատիլինա եւ այլն: Առանձնապես չէի հետաքրքրվել Հռոմի պատմության այդ ամենախռովալից շրջանով, այնպիսի նշանավոր դեմքերով նաեւ, ինչպես Հուլիոս Կեսարը,



Պոմպեոսը, Մարկոս Կրասոսը, Մարկոս Անտոնիոսը եւ այլք (Եգիպտոսի թագուհի Կլեոպատրան էլ վրադիր): Այդ շրջանի դեմքերին ու դեպքերին ավելի կողմնակիորեն ծանոթացել եմ Կիկերոնի առնչությամբ, որ ինձ համար այդ ժամանակի ամենակարեւոր դեմքն է ոչ թե, կամ ոչ այնքան, իբրեւ այդ բոլորի հետ ամնիջականորեն շփված ակնառու քաղաքական գործիչ, այլ մշակութային ամենակարկառուն երեսույթներից մեկը պատմության մեջ իր հռետորական, գրական, փիլիսոփայական գործունեությամբ, եւ դրա շնորհիվ էլ ինձ հատկապես հետաքրքրել է այդ շրջանում ապրած իր վերիվայրումներով լի կյանքը: Այդ կողմնակիորեն ծանոթանալուս առիթ է եղել նաեւ այն հետաքրքրությունս, թե ինչպիսի տիպեր էին մեր հայոց պատմության հետ էլ որպես զորավարներ այս կամ այն չափով առնչված այդ Սուլլան, Լուկուլլոսը, Պոմպեոսը, Մարկոս Կրասոսը, նաեւ այդ խենեշ Մարկոս Անտոնիոսը, որի նենգության զոհ դարձավ մեր մտավորական (ըստ Պլուտարքոսի) արքա Արտավազդ Երկրորդը՝ Մեծն Տիգրանի որդին (ի դեպ, հենց Կիկերոնն էլ դրանից մի տասնամյակ առաջ զոհ էր դարձել Անտոնիոսի վայրագ վրեժխնդրության):

Չասեմ, թե ինչպիսի ընթերցողական հաճույքով կարդացի Մերիմեի այս գիրքը, ինչպես Շիլլերի պարագային էլ. գրողի գրչից ելած պատմաբանական երկեր: Մերիմեն կարծես ձգտում է ավելի գիտական եւ նվազ գրական ոճի, քան Շիլլերը, բայց միեւնույն է՝ գրողը մնում է գրող. կենդանացնելով իր նկարագրածը, ամնիջականորեն տպավորում է, հուզում, որով ավելի է մղում խորհրդածությունների, քան չոր գիտականությամբ շարադրված ուսումնասիրությունը:

Ինչ ահավոր մարդիկ են եղել այդ հռոմեացիները: Ոչ թե Մերիմեն է այդպես ներկայացնում նրանց, այլ փաստերն են այդպես ցույց տալիս: Գրողի դերն այստեղ այն է, որ կատարված իրողությունների մեջ նկատում եւ ցայտուն ներկայացնում է կենդանի մանրամասնություններ, գործող անձանց տիպերը կենդանի դիմանկարում, ի հայտ է բերում անձնական, սոցիալական, քաղաքական հարաբերություններ, հակադրություններ, կրքեր, շահեր, նկրտումներ, ինտրիգներ, տպավորիչ պատկերում է եղելությունների վերիվայր ընթացքը: Կարդում ես ու աչքիդ առաջ պատկերացնում այդ հեռավոր անցյալն իրականորեն, տեսնում ես նենգություն ու զրպարտություն, կեղծավորություն ու խաբեություն, կաշառք ու դավաճանություն, դավադրություն, եւ անընդհատ սպանություններ, հակառակորդների ոչնչացում՝ փոխնիփոխ դրության տերը դարձողի կողմից, եւ միշտ ու ամեն տեղ անողոք դաժանություն, դաժանություն, դաժանություն: Դեռ դպրոցական օրերից նման մի տպավորություն մնացել էր մեջս հռոմեացիների մասին, հիմա կարծես ուղղակի տեսա կոնկրետ պատկերացումով:

Սուլլայի տիպը, օրինակ: Նրա հակառակորդ Մարիոսն էլ մի պակաս տիպ չէ, բայց ավելի ցցուն է երեւում հաղթական Սուլլան, որ իր հրամանատարության տակ գտնվող հռոմեական զորքով արշավում, գրավում է Յռոմը, ամենադաժան հաշվեհարդարի ենթարկում իր հակառակորդներին, հաստատում իր

բռնապետությունը: Մարիուսը կոտորել էր տվել հազարավոր սուլլայականների, սպանված սենատորների գլուխներ ի ցից հանել: Սուլլան առավել եւս՝ մարիուսականների: Նա նույնիսկ մի քաղաք կործանում է ամբողջությամբ, սրի քաշելով բնակիչներին ծերից մինչեւ ծծկեր երեխան: Մի ճակատամարտից հետո վե՞ց թե՞ ութ հազար անգեն գերիների անխնայորեն սպանել է տալիս Յոռմի հրապարակում, իսկ ինքը նույն ժամին սառնասիրտ խոսում է սենատի նիստում, նույնիսկ հանդիմանում սենատորներին, թե նրանք սարսափահար են լինում՝ լսելով սպանվողների ճիչերը հրապարակից: Սուլլան է սկսել հաշվեհարդարի այն չարանե՞զ միջոցը՝ հետագայում էլ օգտագործված, որ կոչվում է պրոսկրիպցիո՝ կասկածելիներին ցուցակներով օրենքից դուրս հայտարարելը, նրանց մատնողներին վարձատրելը, որով արդեն իսկ ապականված բարքերը ավելի եւս ապականվում են, հրահրվում են հոռի կրքերը, մատնիչությամբ, զրպարտությամբ անձնական հաշիվներ մաքրելը, ավելին՝ մատնված զոհերի ունեցվածքին տիրանալու ընչաքաղցությունը: Եվ սակայն զարմանում ես նաեւ, որ դաժանության այդ բացարձակ մարմնացումը, պարզապես զխատառով Ոճրագործ կոչվելիք Սուլլան միաժամանակ եղել է գրասեր ու արվեստասեր մարդ, քաջատեղյակ հին հունական գրականության ու փիլիսոփայության, եւ Միհրդատ Պոնտացու դեմ իր արեւելյան արշավանքների ընթացքում գրավելով նաեւ Աթենքը, ոչ միայն կոտորածի արյունն է հոսեցրել քաղաքի փողոցներում, այլեւ այնտեղից ավարել-բերել է արվեստ ու գրականություն, ըստ որում Արիստոտելի երկերը: Եվ զարմանքիդ մեջ տազնապի նման մի խռովք էլ ես զգում, թե այդ ի՞նչ հակասություն է, բայց նույնիսկ հակասություն է արդյոք...

Երկու հազար տարի առաջ եղել է այդ զխատառ Ոճրագործ Սուլլան, շուրջը քիչ թե շատ նրա նմաններ էլ: Մեր օրերում, երկու հազար տարի հետո, եղան ավելի մեծ զխատառ Ոճրագործներ՝ մի Թալեաթ, մի Հիտլեր, մի Ստալին, եւ նրանց շուրջն էլ քիչ թե շատ նմաններ: Թե՛ այն ժամանակներում, թե՛ այսօր, թե՛ ընդհանրապես մարդկային պատմության ամբողջ ընթացքում այդպիսիները ոչ միայն բյուրավոր մարդկային կյանքեր են կործանել, այլեւ բարքեր են ապականել պարբերաբար, ահ ու սարսափ տարածելու հետ ամենաստոր բնազդներն ու արատները հրահրելով մարդկանց մեջ իրենց այս կամ այն տեսակի չարանե՞զ «պրոսկրիպցիոներով» (այդ չէ՞ր անմիջականորեն մեր իսկ տեսածը այս երկրում ստալինյան օրերին): Չէ, ոչինչ չի փոխվել: Ընդհակառակը: Մեր դարում պարզապես ավելի զանգվածային չափերի է հասել հին Սուլլաների արածը: Եվ մի քիչ ավելի է քողարկվել կեղծիքով, շպարվել ֆրագներով: Եվ ոչ միայն մարդկային բարքերն են ապականվել, այլեւ ահա մեր աչքի առաջ ֆիզիկապես ապականվում է նաեւ երկրագունդը՝ մարդկության տունը տիեզերքում: Եվ ապականվում է գուցե ճակատագրականորե՞ն...

Արդյոք հետայսու լինելո՞ւ է գեթ մի դույզն բարեփոխում: Կարո՞ղ է մարդկությունը բարելավվել: Ի գուր չե՞ն դոնկիխոտյան երազանքները: Սոսկ ուտոպիաներ չե՞ն դրանք, որ տեսանող հանճարներն ստեղծում են

բանաստեղծա-փիլիսոփայական վսեմ երազանքով, բարեմիտ ընթերցողներն էլ ընկալում են գեղագիտական վսեմացնող հաճույքով, ոսկեդար պատկերացնելու երազանք ու հաճույք, եւ ուրիշ ոչինչ: Քաղաքակրթության, գիտության, տեխնիկայի «բարիքները» կամ, այլ կերպ ասած, գովաբանվող «պրոգրեսը» խաբուսիկ բան չէ՞ ըստ էության: Փոխվում է արտաքին ձեւը միայն, բովանդակությունը մնում է նույնը: Ավելին. այս երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, մանավանդ, հանկարծ այնպիսի մի «պրոգրես» սկսվեց, որ ֆանտաստիկ արագությամբ ստեղծվում են կործանելու եւ ապականելու աներեւակայելիորեն ահռելի, ուղղակի օրհասական միջոցներ: Միաժամանակ, օ՞ հրաշք, երկինքն էլ նվաճվում է արդեն՝ տիեզերք դուրս գալու ինչերով... ա՛հ, հենց տիեզերանավ էլ կոչվում են այդ ինչերը: Եվ այս երկրային մարդկանց խելապատակից արդեն խելագար ցնորքներ են թռչում՝ տիեզերքից էլ իրար սպառնալու...

Ո՞վ կարող է վստահեցնել, որ այդ ցնորքները իրականություն չեն դառնա: Ի՞նչ երաշխիք, որ խելագար պատեհապաշտներ, նորահայտ գլխատառ Ռճրագործներ չեն տիրանա կործանելու այդ օրհասական միջոցներին, տիեզերքից էլ սպառնալու կարելիությամբ հանդերձ: Սուլլայից առաջ եղել են Սարգոններ, Սուլլայից հետո նույնիսկ ավելի վայրենի Չինգիզխաններ, ասենք նաեւ քաղաքակրթվածներ Նապոլեոնի նման, մեր օրերում էլ ահա Թալեաթ, Յիտլեր, Ստալին: Իսկ մարդկային «հանճարն» այսօր իր հենց գիտատեխնիկական «պրոգրեսով» այնպիսի թափ է առել, գրեթե տարեցտարի, ի՞նչ են ասում, ամսեամիս այնպիսի նորանոր «տեխնիկայի հրաշքներ» են հնարվում, որ մի տեսակ վախ ազդելու չափ նույնիսկ, թեւ առերեւույթ աննկատելիորեն այլափոխվում են մարդկային մտայնությունը, բարքերը, անգամ կենցաղը (երբ անդրադառնում են, որ իմ այս մտ հիսունամյա կյանքի ընթացքում ինչքան փոխվեց աշխարհը, ոչ միայն զարմանում են, այլեւ հենց մի տեսակ թաքուն երկյուղով մտածում՝ ինչպիսի՞ աշխարհում են գտնվելու վաթսուներկու կամ յոթանասուներկու): Եվ միաժամանակ՝ այդ «տեխնիկայի հրաշքները» կարծես փոքրացնում են երկրագունդը հաղորդակցության, երթելիության ավելի ու ավելի արագացող միջոցներով, իսկ «փոքրացած» երկրագունդը կարող են ավելի ենթարկելի դարձնել այն ուժերը, որոնց իշխողական մտայնությունն էլ, ըստ էության շահամուլ, ավելի տոտալիտար է դառնում համաշխարհային տիրապետության ախորժակով, թեւ այս կամ այն կողմից հոլովում են իմաստագուրկ ծանոն դարձած «դեմոկրատիա» պիտակը, իսկ այդ ախորժակների բախումից ապոկալիպտիկորեն չարագույժ շառաչներ են լսվում այլեւս: Եվ իրոք, կա՞ որեւէ երաշխիք, թե այդ շառաչներից հանկարծ չի ճայթի վերջնական կործանման աղետը մարդկության գլխին, եւ կամ այդ ուժերից մեկը կամ մյուսը չի դառնա ամբողջ երկրագունդն իրեն ենթարկած, ամբողջ մարդկությունն ստրկացրած մի նոր գլխատառ Ռճրագործ, թեկուզ ոչ արդեն ցցուն մի դեմք իր անունով (ցցուն դեմքերի ժամանակն էլ փոխվել անցել է

կարծես բոլոր ասպարեզներում), այլ հենց չանձնավորված Ուժ, անանուն մի Կենտրոն...

20 սեպտեմբեր- Մերիմեի գրքից ախորժակի եկած, կարդացի բուն աղբյուրներից մեկը՝ հռոմեացի առաջին պատմիչներից Սալլուստիուսին: Անգլերեն մի փոքրաչափ գիրք, ուր ամփոփված է ամեն ինչ, որ հասել է այդ պատմիչի գրվածքներից. նրա երկու նշանավոր մենագրությունները՝ «Կատիլինայի պատերազմը» եւ «Յուգուրթայի պատերազմը»՝ պատառիկներ կորած «Պատմություն»-ից, նաեւ նրան վերագրված մի քանի տարակուսելի գրություն: Կարելորդ երկու փոքրածավալ, սեղմ ու կուռ ոճով մենագրություններն են, առաջինը՝ Կատիլինայի դավադրության մասին, երկրորդը՝ Յուսիսային Աֆրիկայում նումիդիացիների թագավոր Յուգուրթայի դեմ պատերազմի մասին, երկեր, որ ունեն ակնբախ գրական արժանիքներ նաեւ, պատմագրումը վիպական է թվում նույնիսկ, մանավանդ երկրորդում: Հաճելի կարդացվող հեղինակ է. առանց մանրամասնություններով խճողելու եւ ծավալվելու, ցայտուն գծերով պատկերում է դեպքեր, անցուդարձեր, զանգվածային շարժումներ, բնակարան գործողության վայրեր, դիմանկարում բնավորություններ, ինչպես օրինակ, Կատիլինան հենց, Կատոնը, Կեսարը՝ առաջին երկում, կամ Յուգուրթան հենց, Մարիուսը, Մետելլուսը՝ երկրորդ երկում: Խոսվում են նաեւ ճամբեր, հղվում նամակներ, բայց երեւում է, որ դրանք իր լեզվով են վերաշարադրված կամ նույնիսկ վերահորինված: Հիշեցնում է Թուկիտիդեսի ոճը, որին շատ վաղուց են կարդացել, սա կարծես ավելի վառ ու կենդանի տպավորություն է թողնում: Պատմությունը կառուցում է հետաքրքրաշարժ դարձնելու միտումով, եւ գուցե դրա համար ժամանակագրական խախտումներ էլ է արել, ինչպես գտել են պատմաբանները՝ ուրիշ փաստական անճշտություններ ու սխալներ եւս հայտնաբերելով նրա այդ երկերում:

Թե՛ «Կատիլինա»-ն, թե՛ «Յուգուրթա»-ն նա սկսում է փիլիսոփայական խոհերով, որոնք հետաքրքրական են իրենց պարզությամբ, հստակությամբ, ճշմարտացիությամբ: Հռոմեացի հեղինակներն առհասարակ իրապաշտ ու ճշգրիտ են իրենց փիլիսոփայական դատողությունների մեջ, որոնք հաճախ, գրեթե նույնիսկ բացառապես երբեմն, վերաբերում են քաղաքացիական առաքինությունների եւ հոգեբանության ոլորտին, ջատագովում են արիության գործերն ի բարօրություն հռոմեական պետության՝ թե՛ քաղաքական, թե՛ ռազմական ասպարեզներում, եւ մերկացնում, պախարակում են բոլոր այն բարոյական արատները, որոնք վնասաբեր, նույնիսկ վտանգավոր են պետության համար, կարող են քայքայել Հռոմի հզորությունը: Սալլուստիուսի պարագայում թվում է նույնիսկ, որ Հռոմի քաղաքական կյանքում իր իսկ օրոք կատարված խռովալից, հեղափոխող իրադարձություններն առիթ են ծառայել նրան՝ բարոյախոսելու, «տխրությամբ ու վրդովունքով» այպանելու բարքերի համընդհանուր ապականումը հռոմեական հասարակության բոլոր խավերում վերից վար՝ սենատորներից մինչեւ ստրուկները, հատկապես ազնվականության

ու դրա սանձարձակ դարձած երիտասարդ սերնդի մեջ մանավանդ, բարոյական անկուճը թե՛ քաղաքական, թե՛ քաղաքացիական, թե՛ անձնական առումներով: Անկուշտ ձգտում հարստանալու, շվայտ ու ցոփ կյանք վարելու, նաեւ իշխող դիրք գրավելու տենչ, իսկ նկրտումներին հագուրդ տալու արատավոր միջոցներ՝ կաշառք, զրպարտություն, խարդավանք, ուխտադրություն, մատնություն, դավադրություն, ի հարկին սպանություն, եւ կրքեր, կրքեր՝ քաղաքական, անձնական, եւ այդ բոլորը՝ կուսակցությունների միջեւ հարափոփոխ պայքարի, քաղաքացիական խռովությունների ու կռիվների մթնոլորտում:

Սալլուստիուսը խոստովանում է, որ ինքն էլ իր երիտասարդության օրերին ձգտել է պետական գործունեության, պատվաբեր պաշտոնների, ու թեւ տեսել է շուրջը ազահություն, կաշառակերություն, արատավոր բարքերի ամբողջ լկտիությունը, այնուամենայնիվ, այդ բոլորն արհամարհելով ու նման հակումներ չունենալով հանդերձ, դեռ անփորձ երիտասարդ, վարակվել է «հռոմի փառասիրությամբ», սակայն շատ դառնություններ կրելուց հետո վերջապես հրաժարվել է պետական գործունեությունից, ազատվելով հույսերից, վախերից ու որեւէ կողմնակցությունից: Մնացյալ կյանքը նվիրել է ոչ թե նվաստ հաճույքների, այլ հռոմեական ժողովրդի պատմությունը գրելուն: Եվ այդպիսով վերադարձել է իր երիտասարդության բուն ձգտումներին, որոնցից իրեն շեղել էր հռոմի փառասիրությունը. սքանչելի է, ասում է նա, երբ մարդ արժանավոր գործերով է ծառայում իր երկրին, նվազ սքանչելի չէ, երբ մարդ ծառայում է նաեւ խոսքերով՝ արձանագրելով եղելությունները:

Սալլուստիուսը չի ասում, սակայն, որ իր այդ «հռոմի փառասիրությամբ» կարողացել է նույնիսկ Սենատի անդամ դառնալ, քաղաքական թեժ պայքարում հարել է Յուլիոս Կեսարի կողմը, այլեւայլ մեղադրանքներով արտաքսվել Սենատից, ապա Կեսարը նրան կրկին մտցրել է Սենատ: Քաղաքացիական պատերազմում ծառայել է Կեսարին ռազմական գործողություններով՝ մերթ անհաջող, մերթ հաջող, ապա Կեսարը, ի վարձատրություն, հռոմեական կայսրության Աֆրիկա եւ Նումիդիա գավառի կուսակալ է նշանակել նրան: Չի ասում նաեւ, թե այդ պաշտոնն այնպես է չարաշահել, այնպիսի հարստություն դիզել, որ Յոռն վերադարձին դատ էր սպառնում իրեն այդ չարաշահումների համար, ազատվել է Կեսարի միջամտությամբ: Յամենայն դեպս, մեծահարուստ դարձած՝ արդեն կալվածք է ձեռք բերել ու կառուցել հոյակապ մի դաստակերտ, որ հետագայում էլ կոչվել է «սալլուստիական» ու եղել կայսրերի սեփականություն: Եվ ահա, կալվածատեր, քաշվել է մի կողմ, երբ Յուլիոս Կեսարի սպանությունից հետո հրաժարվել է պետական գործունեությունից, այլեւս առանց «հույսերի, վախերի եւ որեւէ կողմնակալության»: Էհ, գոնե լավ է, որ արդեն մեծահարուստ հռոմեացու իր մնացյալ կյանքը, մի տասը տարի եւս մինչեւ հիսուն տարեկան, հատկացրել է ոչ թե իր արհամարհած նվաստ հաճույքներին, ինչպես ուրիշ հարուստ հռոմեացիներ, այլ նվիրել է իր երկրին «խոսքով» ծառայելու առաքինությանը, իբրեւ պատմագիր ու իր օրոք բարքերի անկումից «տխրած ու վրդովված» բարոյախոս: Եվ դարերին ժառանգություն է թողել իր երկերը, այս երկու գուլիզործոց մենագրությունները մանավանդ, որոնք իրենց ոճով եւ այլ արժանիքներով մեծ ազդեցություն են գործել հետագա լատինական գրականության վրա ու, ավելին, գանազան լեզուներով թարգմանվել են բազմիցս, մինչեւ այսօր էլ հաճույքով են ընթերցվում:

ոչ միայն իբրև պատմագրական, այլև գրական երկեր, ինչպես ինքս էլ ահա ունեցա այդ վայելքը, կարողալով անգլերեն:

Ի դեպ, չնոռանամ, «Յուզուրթայի պատերազմ»-ում նկարագրելով Հյուսիսային Աֆրիկան, Սալլուստիուսը, հիմնվելով իր ունեցած տեղեկությունների վրա, խոսում է այդ երկրամասի բնակչությունը կազմած ցեղերի մասին, բնիկների ու եկվորների, վերջիններիս թվում հիշատակվում են նաև հայերը: Անակնկալ էր իմ աչքին: Այն ժամանակներում որտեղից որտեղ: Իբր լինելով մի բանակի մնացորդներ Իսպանիայում՝ պարսիկներ, մեդացիներ ու հայեր, այնտեղից նավերով անցել են Աֆրիկա: Պարսիկներն ավելի օվկիանոսի կողմն են գնացել ու միաձուլվել բնիկներին, մեդացիներն ու հայերը լիբիացի բնիկների հետ բերդաքաղաքներ են կառուցել Միջերկրականի ափերին եւ զբաղվել Իսպանիայի հետ ապրանքափոխանակությամբ: Այդ խառնուրդներից կազմվել են նուսիդիացիներն ու մավրերը: Մի քիչ առասպելական հնչող անակնկալ իմ աչքին, բայց ահա փաստ է «հայեր» բառը Սալլուստիուսի գրչի տակ երկու հազար տարի առաջ, այն էլ երբ խոսում է Աֆրիկայում ավելի հին ժամանակների մասին: Հետաքրքրական է, այնուամենայնիվ: Ինչ գիտես. չէ՞ որ առածն ասում է՝ առանց կրակի ծուխ չի լինում...

Սալլուստիուսին վերագրված տարակուսելի գրություններից մեկը Կիկերոնի դեմ հարձակողական ինվեկտիվուս է (թարգմանենք՝ զրպարտագի՞ր կամ նույնիսկ հայհոյագի՞ր): Շատ տարօրինակ: Չարմանում, տարակուսում, վրդովվում ես կարողալով այդ մի քանի էջը. մի՞թե անբարոյականության այդ կատարյալ մարմնացումը այն նույն Կիկերոնն է, մեկն այն համաշխարհային մշակույթի մեծերից, դարերով բարձր գնահատված մի դեմք, որ բոլորովին այլ կերպար է պատկերացել աչքիդ, երբ կարդում էիր նրա երկերը, նաև կարդում նրա մասին: Որքան էլ մարդկային թերություններ ունենար Կիկերոնը, անկարելի է, որ լիներ այնպիսի մոդկալի տիպ, ինչպես ներկայացված է այդ հայհոյագրում: Եվ հենց հայհոյագիրն էլ այնքան մոդկալի է իբրև գրվածք, որ բունբրանգի նման վերադառնում ու խփում է այդ մի քանի էջը մրոտողին: Մի՞թե իրոք Սալլուստիուսն է այդ մրոտողը՝ այնքան չարալեզու հայհոյական զրպարտիչ: Բայց չէ՞ որ նույն Սալլուստիուսը խստագույնս դատապարտում է Կատիլինայի դավադրությունը որպես մեծագույն պետական հանցագործություն, եւ դրա մասին իր մեծագրության մեջ ոչ մի վատ բառ անգամ չի ասում Կիկերոնի վերաբերյալ, որին բազմիցս հիշատակում է, բնականաբար, քանի որ հենց Կիկերոնի ձեռքում էր գերագույն իշխանությունն այն ժամանակ, լինելով կոնսուլ, եւ նա է մերկացրել ու վնասագերծել այդ դավադրությունը՝ փրկելով Հռոմը մեծ վտանգից եւ դրա համար նույնիսկ կոչվելով «Հայր հայրենյաց»: Պատմաբանների ու լատինագետ բանասերների միջև, պարզվում է, վեճ էլ կա՝ վերագրել՝ Սալլուստիուսին այդ հայհոյագիրը: Ոմանք վերագրելու կողմ են, ոմանք դեմ են, ոմանք էլ կարծիք են փոխում այս ու այն կողմ:

Համենայն դեպս, այդ հայհոյագիրը որպես տարակուսելի է բերված այս գրքում: Բայց ավելին: Բերված է նաև մի պատասխան հայհոյագիր, որ վերագրվել է Կիկերոնին: Սա էլ շատ տհաճ տպավորություն է թողնում թե՛ իբրև անձնագով ինքնապաշտպանություն, թե՛ իբրև նույնքան մոդկալի մեղադրանքներով հարձակում, եւ գրված այնքան անշնորհք, որ բոլորովին նման չէ բուն Կիկերոնի գրչին, ինչպես առաջին հայհոյագիրն էլ չի թվում, որ բարքերի ապականումից եւ իր երիտասարդական «հոռի փառասիրությունից» անգամ «տխրած ու վրդովված» Սալլուստիուսի գրչին է նման: Ստածում ես՝ սա ի՞նչ պատմություն է, այս հայհոյագրերի խնդիրը, չէ՞ որ երկուսի էլ՝ թե՛ Կիկերոնի, թե՛ Սալլուստիուսի, ինչպես առհասարակ, հռոմեացի հեղինակների, ամենաշատ սիրած ու գործածած բառը

«առաքինությունն» է: Ջուտ մարդկայնորեն ինձ հետաքրքրում է այս խռովիչ, տխուր պատմությունը, որ կարծես մի քիչ էլ զավեշտական է հնչում: Եվ ուզում եմ հասկանալ:

Բնագրս, այսինքն՝ ճշմարտության զգացումս ավելի հավատում է այն պատմաբաններին ու լատինագետ բանասերներին, որոնք դեմ են այդ նողկալի գրվածքները Սալլուստիուսին, առավել եւս Կիկերոնին վերագրելուն: Մանավանդ որ կարծիք էլ կա, թե դրանք հետագայում հորինված կեղծվածքներ են, իբրեւ գրչի վարժանք հռետորական դպրոցներում: Գուցե հին ժամանակներում ավանդաբար գիտեին, որ Սալլուստիուսի եւ Կիկերոնի միջեւ, քաղաքական թեժ պայքարի տարիներին Յռոմում, եղել է մի հակամարտություն ինչ-ինչ պատճառներով, եւ դա, երեւի, մի տեսակ «թեմա» է ծառայել՝ ջանալով նմանակել անցյալի այդ մեծանուն հեղինակների ոճը, գրչի վարժանքներ անելու ինվեկտիվուսի ձեւով: Հռետորական-պամֆլետային մի ձեւ, որով հռոմեացիներն անխնա պարսավում, նույնիսկ զրպարտում էին իրար, մանավանդ քաղաքական պայքարում: Գուցե այնպե՛ս խիզախորեն հանդուզն էին նրանք, որ նման մերկապարանոց պարսավանքներն այնքան տարօրինակ չէին թվում իրենց, որքան այսօր մեզ: Կամ գուցե այնքա՞ն կեղծավոր էին, որ սովորական բան էր թվում իրենց, հռետորական ճարտարություն, երբ քաղաքական հաշիվներից ելնելով, բայց անպայման խոսելով առաքինությունների անունից, այդպես անխնա խժթում էին իրար, ճիշտն ու սուտը խառնելով, անգամ ի ցույց դնելով հակառակորդի անձնական վարք ու բարքը:

Այնուամենայնիվ, ըստ երեւույթին, ավելի նախնականորեն բնատիպ, ավելի անբող իրապաշտ են թվում հռոմեացիներն իրականության հանդեպ իրենց վերաբերմունքով՝ լինի խոսքերի, լինի գործերի մեջ, քան մեր նոր ժամանակների մարդիկ, որոնց խոսքերն ու գործերը, մանավանդ քաղաքական ասպարեզում, շարված են ավելի թաքնամիտ, ավելի ահավոր կեղծիքով: Աչքիս գալիս են հռոմեական քանդակագործության մեջ այն զարմանալիորեն իրապաշտ դիմաքանդակները՝ կայսրեր, զանազան ասպարեզների գործիչներ, նույնիսկ հասարակ հռոմեացիներ, այդ սուր, պիրկ իրապաշտությամբ պատկերված դեմքերի մի ամբողջ անկրկնելի պատկերասրահ, մերթ սարսուռ ազդելու չափ տպավորիչ, երբ մայում ես ամեն մի դեմքին, որ այնքան կենդանի, խոսուն է թվում իր ուրույն դիմագծերով արտահայտված անհատական բնավորությամբ ու նկարագրով, տեսնում ես նույնիսկ, թե այսինչ կայսր կամ գործչի դեմքը, թեկուզ մի քանի ճշգրտորեն բռնված բնորոշ գծերով, հենց համապատասխանում է պատմականորեն վկայված նրա գործունեության բնույթին:

Իզուր անցյալ օրը «ահավոր» կոչեցի հռոմեացիներին: Դարերի ընթացքում ո՞վ ահավոր չի եղել որոշ հանգամանքներում, ինչպես ասել եմ արդեն, խորհրդածելով Սուլլայի կերպարից թելադրված, հասնելով մինչեւ մեր օրերը եւ ապագայի էլ մտահոգությամբ: Հանկարծ անդրադարձա հիմա, որ այդ Սուլլան, մի երկու տարի իշխելուց հետո, գոնե կամովին հրաժարվել է իր դաժան բռնապետությունից ու մի կողմ քաշվել իր անձնական կյանքն ապրելու: Իսկ մեր օրերում, հենց իմ սերունդը շատ ու շատ ավելի ահավորը տեսավ: Հիտլերն էլ, Ստալինն էլ մինչեւ իրենց կյանքի վերջին րոպեն համառորեն իշխեցին անագորույն, անզիջում բռնապետությամբ, եւ նրանց չարագործություններին զոհ գնացին քանի-քանի տասնյակ միլիոն կյանքեր, հարյուրավոր միլիոն կյանքեր էլ դարձան տանջանք ու տառապանք, սրբություններ կործանվեցին, բարոյական արժեքներ քանդվեցին, գուցե ճակատագրականորեն ապականվեցին բարքեր, եղծվեցին, աղճատվեցին բյուրավոր մարդկային հոգիներ...